# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ 11.05.2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, ք.Ստեփանավան
երկու հազար տասնվեց թվականի սեպտեմբերի երկուսին

Քաղաքացի ԼԱՐԻՍԱ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ, ծնված՝ 04/08/1952թ.ID քարտ՝ 008003436, տրված 053-ի կողմից, տրման ամսաթիվը 01/04/2016թ.ՀԾՀ 5408520455, հաշվառված ԼՈՌԻ, ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, 4ՄԿՐՇ. 2Փ.,15 Տ, այսուհետ՝ <<Վարձատու>>, մի կողմից և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա.Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության համաձայն,որի անունից համաձայն 2016 թվականի հուլիսի 29-ին տրված թիվ 36 լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Ստեփանավանի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն ՄԿՐՏԻՉ ՆՈՐԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, ծնված 05/10/1985թ. անձնագիր AM 0573080, տրված 053-ի կողմից, տրման ամսաթիվը 21/12/2011թ. ՀԾՀ 1510850309, հաշվառված ԼՈՌԻ, ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ Փ.,2Ա Շ, 27ԲՆ, այսուհետ՝ <<Վարձակալ>>, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ <<Կողմեր>>, ղեկավարվելով Ստեփանավանի նոտարական գրասենյակում 11.05.2011 թվականին՝ սեղանամատյանի գրանցում N 1415, կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի 7.2. կետով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. 2011 թվականի մայիսի 11-ին Ստեփանավանի նոտարական գրասենյակում՝ սեղանամատյանի գրանցում N 1415, կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում (որում Վարձատու է հանդիսացել Վալտեր Սարգսի Գևորգյանը, մահացած՝ 10.12.2015թ, նրա իրավահաջորդն է Լարիսա Արիստակեսի Հովսեփյանը) կատարել Վարձատուի (սեփականատիրոջ) փոփոխություն:

1.2. 2011 թվականի մայիսի 11-ին Ստեփանավանի նոտարական տարածքում թիվ 1415 սեղանամատյանով վավերացված անշարժ գույքի Ստեփանավան քաղաքի Սուրբ Նշան փողոց թիվ 12 հասցեի անշարժ գույքի վարձակալության պայմանագրի /19.03.2015թ.Ստեփանավան Նոտարական տարածքում թիվ 601 սեղանամատյանով վավերացված է համաձայնագիր՝ ոչ բնակելի տարածքի վարձակալության 11.05.2011թ պայմանագրում փոփոխություն կատարելու մասին/ բոլոր մնացած կետերը մնում են անփոփոխ,նույն պայմաններով և նույն ժամկետներով/պայմանագիրը գործում է մինչև 31.12.2020 թվականը ժամանակով/:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից: Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Այլ պայմաններ

3.1. Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2. Ստեփանավան նոտարական տարածքում 01.07.2016թ թիվ 1368 գրանցամատյանով/ժառանգական գործ 78/վավերացված ժառանգության իրավունքի վկայագիրը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3. Սույն Համաձայնագիրը կազմված է 4 օրինակից,որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը և ժառանգման իրավունքի վկայագիրը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

**ՎԱՐՁԱՏՈՒ**

Լարիսա Արիստակեսի Հովսեփյան
ՀՀ Լոռու մարզ ք.Ստեփանավան 4-րդ միկրոշրջան 2-րդ փողոց տուն 15
Բանկի անվանումը՝ <<ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> Ստեփանավան մ/ճ
հ/հ 220241649338000

**Լ.Հովսեփյան** ______________
(ստորագրություն)

Հովսեփյան

**ՎԱՐՁԱԿԱԼ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք N 3
Բանկի անվանումը՝ ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն,թիվ 3 ՏԳԲ
հ/հ՝ 900011102044
ՀՎՀՀ 01506515
Աշխատակազմի ղեկավար **Ա.Գրիգորյան,** որի անունից համաձայն 29.07.2016թ.թիվ 39 լիազորագրի հանդես է գալիս ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ԶՊ գործակալության Ստեփանավանի ՏՏԿ տնօրեն

**Մ.Գրիգորյանը** ______________
Կ.Տ. (ստորագրություն)

2016թ. սեպտեմբերի/ երկուսի, սույն համաձայնագիրը վավերացվել է իմ Ստեփանավան նոտարական տարածքի նոտար՝ Արսեն Հարությունյանիս կողմից:
Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ:
Նրանց ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունը, ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցամատյան թիվ 1949

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն <<Պետական տուրքի մասին>> և <<Նոտարիատի մասին>> օրենքների:

Նոտար՝ Ա. Հարությունյան ______________

**Գործարքի կոդ:** 595-20160701-84-698745
**Գործարքի ծածկագիր:** FANF3P

ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր
ՀՀ Լոռու մարզ քաղաք Ստեփանավան
Երկու հազար տասնվեց թվականի, հուլիսի մեկին

Ես՝ Ստեփանավան նոտարական տարածքի նոտար Արսեն Հարությունյանս
հաստատում եմ, որ ՀՀ քաղ.օրենսգրքի 1216 հոդվածի համաձայն քաղաքացի
**Վալտեր Սարգսի Գևորգյանի,**
մահացած՝ 10.12.2015թվ./դեկտեմբերի տասին երկու հազար տասնհինգ/ թվականին
գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում
կինը՝ **ԼԱՐԻՍԱ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ** ծնված՝ 04/08/1952թ., անձնագիր՝ 008003436
տրված 053-ի կողմից 01/04/2016-ին. ՀԾՀ՝ 5408520455, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, 4
ՄԿՐՇ. 2 Փ., 15 Տ
ժառանգական գույքը, որի համար տրվում է սույն վկայագիրը բաղկացած է՝
համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի Ստեփանավան տարածքային ստորաբաժանման կողմից
28 հուլիսի 2010 թվականին տրված թիվ 2485874 անշարժ գույքի
սեփականության իրավունքի գրանցման վկայականի
- Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Սուրբ-Նշան փողոց, թիվ 12 հասցեում գտնվող
պահեստից և տնտեսական մասից, կիսակառույց շինություններից, պարիսպից և խառը
կառուցապատման հողամասից.
-առաջին հարկ՝ տնտեսական մասի ընդհանուր մակերեսը կազմում է - 82.5քմ/ութսուներկու
ամբողջ հինգ/
-երկրորդ հարկ՝ սպասարկման ոլորտի օբյեկտի ընդհանուր մակերեսը կազմում է -
99.7քմ/իննսունինը ամբողջ յոթ/
- կիսակառույց շինությունների ընդհանուր մակերեսը կազմում է - 612.6քմ/վեց հարյուր
տասներկու ամբողջ վեց/
-պարիսպի ընդհանուր մակերեսը կազմում է - 2.9քմ/երկու ամբողջ ինը/
-հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է - 0.11477հա/զրո ամբողջ տասնմեկ հազար չորս
հարյուր յոթանասունյոթ/

համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի Ստեփանավան տարածքային ստորաբաժանման կողմից
28 հուլիսի 2010 թվականին տրված թիվ 2485875 անշարժ գույքի
սեփականության իրավունքի գրանցման վկայականի
- Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Սուրբ-Նշան փողոց, թիվ 12ա հասցեում գտնվող
առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտից և խառը կառուցապատման հողամասից.
-առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտի ընդհանուր մակերեսը կազմում է -
43.0քմ/քառասուներեք ամբողջ զրո/
-հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է - 0.00517հա/զրո ամբողջ զրո զրո հինգ հարյուր
տասնյոթ/

համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի Ստեփանավան տարածքային ստորաբաժանման կողմից
28 հուլիսի 2010 թվականին տրված թիվ 2485876 անշարժ գույքի
սեփականության իրավունքի գրանցման վկայականի
- Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Սուրբ-Նշան փողոց, թիվ 12բ հասցեում գտնվող առևտրի
և սպասարկման ոլորտի օբյեկտից և խառը կառուցապատման հողամասից.
-առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտի ընդհանուր մակերեսը կազմում է - 141.1քմ/հարյուր
քառասունմեկ ամբողջ մեկ/
-հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է - 0.01776հա/զրո ամբողջ զրո հազար յոթ հարյուր
յոթանասունվեց/

համաձայն Հայաստանի Հանրապետության Ոստիկանության "Ճանապարհային
Ոստիկանություն" Ծառայության Վանածորի Հաշվառման Քննական Բաժանմունքի կողմից

14.09.2012թվ. տրված տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 07 AA 645929 վկայականի BMW 520 մակնիշի ավտոմեքենայի՝
Թողարկման տարեթիվը՝ 1991թ.
Տեսակը՝ թեթև մարդատար, թափքի տեսակը՝ սեդան
Նույնացման համարը՝ WBAHB51020BD48363
Թափքը՝ WBAHB51020BD48363
1/2 մասից:

Ժառանգական գործ 78
Սեղանամատյան 1368

Գանձված է պետական տուրք 2000 դրամ և ծառայության վճար 8000 դրամ համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար          Արսեն Հարությունյան